

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հունվարի 6-ին, չորեքշաբթի.— «Տօն Ծննդեան և Մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Մայր տաճարը տոնականորեն զարդարվել է մեծ տոնի ուրախ առիթով: Առավոտյան ժամերգությունը ավանդական հանդիսությամբ պաշտվում է Մայր տաճարում՝ մասնակցությամբ Մայր Աթոռի ողջ միաբանության:

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով և զանգերի ավետավոր ղողանջների ներքո առաջնորդվում է Մայր տաճար՝ ս. Ծննդյան հանդիսավոր պատարագը մատուցելու:

Մայր տաճարը լիքն է աղոթավոր ուխտավորներով և հավատացյալներով:

Հայրապետական ս. պատարագի ժամանակ Սեղանին սպասարկում են վարդապետների, քահանաների դասն ու սարկավագների խումբը: Մայր տաճարի կամարների տակ հնչում է «Խորհուրդ մեծ և սքանչելի»-ն՝ հոգիները լցնելով ս. Ծննդյան ուրախությամբ և պատգամով:

Ամեն կողմ լո՜ւյս, խո՜ւնկ ու աղո՜թք:

«Հայր մեր»-ից առաջ ազգիս Վեհափառ Հայրապետը ս. Ծննդյան խորհրդի մեծ ավետիսը տալով հայ եկեղեցուն ու բովանդակ հայությանը, խոսում է ոգեշունչ և իմաստալից Իր քարոզներից մեկը՝ օրվա տոնի համամարդկային, հոգևոր ու բարոյական մեծ նշանակության մասին:

Հայրապետական քարոզը, որը տպագրվել է ամսագրի սույն համարում (էջ 3), նույն գիշեր ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, Ավագ սեղանի բեմի առաջ կատարվում է Զրօրհնյաց սրբազան կարգը՝ ի հիշատակ Քրիստոսի մկրտության «ի Յովհաննէ, ի Յորդանան գետ»: Հանդիսադիր Վեհափառ Հայրապետը ընթերցում է ս. Բարսեղի Զրօրհնյաց մեծ աղոթքը:

Մայր տաճարի կամարների տակ հնչում են դաշն ու հոգեպարար «Ով զարմանալի», «Այսօր ձայնն հայրական» մկրտության հոգելից տաղերը:

Սրբազան արարողության ավարտին հավատացյալները ջերմեռանդ բարեպաշտությամբ վերցնում են Քրիստոսի մկրտության օրհնյալ ջրից՝ հոգեպես նաև պայծառացած օրվա մեծ տոնի խորհրդով:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, ուր ս. Ծննդյան տոնի առիթով ընդունում է շնորհավորություններ, ապա օրհնում ազգն ու եկեղեցին, հայրենիքն ու ժողովրդին՝ մաղթելով խաղաղություն աշխարհին, համերաշխություն ու հաշտություն բոլոր ազգերին:

Ն. Ս. Օծության «Պահպանիչ»-ով ավարտվում է օրվա հանդիսությունը: